

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՍՔԵԹՊՈԼԸ

Posted on August 28, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



Պասքեթպոլի Միջազգային Մրցաշրջանը

Երեւանի մէջ (2014 FIBA)

Միևսս Գոճայեան, Լոս Անճելըս, 27 Օգոստոս, 2013

✘ Յաճախ ըսած ենք ու պիտի շարունակենք կրկնել լափալիսեան այն ճշմարտութիւնը թէ՛ երիտասարդները մեր ապագան են, պետք է գուրգուրանք անոնց վրայ, պետք է փոքր տարիքէն պատրաստենք ու թրծենք զանոնք, որպէսզի հեզասահ ընթանայ անհրաժեշտ սերնդափոխութիւնը: Մարդկային կեանքը օրկանական աշխարհի օրէնքներուն կը հետեւի. մարդը, ընկերութիւնը, հասարակութիւնը պետք է եւ պարտաւոր է ապահովել իր շարունակականութիւնը:

Պասքեթպոլի Միջազգային Մրցաշրջանը

Երեւանի մէջ (2014 FIBA)

Միևսս Գոճայեան, Լոս Անճելըս, 27 Օգոստոս, 2013

✘ Յաճախ ըսած ենք ու պիտի շարունակենք կրկնել լափալիսեան այն ճշմարտութիւնը թէ՛ երիտասարդները մեր ապագան են, պետք է գուրգուրանք անոնց վրայ, պետք է փոքր տարիքէն պատրաստենք ու թրծենք զանոնք, որպէսզի հեզասահ ընթանայ անհրաժեշտ սերնդափոխութիւնը: Մարդկային կեանքը օրկանական աշխարհի օրէնքներուն կը հետեւի. մարդը, ընկերութիւնը, հասարակութիւնը պետք է եւ պարտաւոր է ապահովել իր շարունակականութիւնը:

Այս խոհերով բաժնուեցայ Հայաստանի Պասքեթպոլի հաւաքականի հետ հանդիպումէն, հոգեկան հանգստութիւն մը եկաւ վրաս եւ աւելի հաւատքով ու լաւատեսութեամբ բաժնուեցայ իրենցմէ:

Լոս Անճելըսի Հայաստանի Հանրապետութեան հիւպատոսարանին մէջ ընդունելութիւն-հարցազրոյց մըն էր, ուր ներկայ էին ինծի պէս հայ երիտասարդութեան կամքի ուժին հաւատացողներ, մարզասերներ, հովանաւոր ազգայիններ: Բոլորիս ուշադրութիւնը այս հասակաւոր, ես պիտի ըսէի՝ պարթեւահասակ տղաներուն վրայ էր, որոնց կ'ընկերանային իրենց մարզիչները՝ գլխաւորութեամբ արտակարգ անձնաւորութեան մը, որ տիրացած է բազմաթիւ ոսկեմետալներու, գովասանագիրներու եւ գնահատագիրներու: Ան **Քարլ Պարտագեանն** է, ԱՄՆ ծնած ու մեծցած, իր ուսանած համալսարանին մէջ պասքեթպոլի աստղ դարձած երիտասարդ մը, որ իմ կարծիքով մտատիպար մըն է հայ երիտասարդի: Քարլ հայերէնը սորված է եւ ազատօրէն կը հաղորդակցի մայրենիով ԱՄՆ-ի մէջ ոչ միայն իր արհեստավարժ ուսուցիչներու (Փրոֆ. Գեորգ Պարտագեան եւ Տիգրան Թումանյան) շնորհիբն որպէս արդիւնք, այլ հայերէն թերթ կարդալով եւ սպասարկելով Հայաստանեայց եկեղեցւոյ որպէս սարկաւազ:

Առանձնակի հպարտութեամբ կը յիշեմ իր խօսքը, երբ այս տողերու հեղինակին կ'ըսէր.
«Ես ձեր յօդուածները առաջին կարդացողներէն եմ»:

Այսօր Քարլ մեզի կը ներկայանայ որպէս Հայաստանի հաւաքականի գլխաւոր
կազմակերպիչ ու մարզիչ, որուն վստահուած է մեր հաւաքականը տանիլ յաղթանակէ
յաղթանակ: Ոչինչ կը պակսի իրեն՝ իր եւ մեր երազը իրականացնելու ճամբուն վրայ: Ան
կամքի տէր է, հայրենասէր՝ բառիս բուն իմաստով, հեզ բայց պահանջքոտ, գիտէ ընտրել
ճիշդ գործընկերներ եւ օգնականներ, ինչպէս Զօրիկ Իսաջանը:

Հիւպատոսարանի ընդունելութեան ընթացքին միջոցառումին հանդիսավար Միհրան
Թումաճան շատ պարզ կերպով ըսաւ. «Մենք բոլոր տուեալները ունինք ախոյեան
դառնալու, երբ ունինք այսպիսի նուիրեալ տղաք, մարզիչներ ու համակիրներ»:

Տղաքը նոր վերադարձեր էին հայրենիքէն, ուր անոնք իրենց հայաստանաբնակ
խաղընկերներուն հետ անցուցած էին բարդ ու բազմակողմանի վարժութիւններ եւ
լի էին ինքնավստահութեամբ: Անոնք լրջօրէն կը շարունակէն իրենց մարզումները
այստեղ՝ Լոս Անճելըսի մէջ, որովհետեւ «սա կարելոր ստուգատես է մեր թիմի համար,
նաեւ՝ պարտաւորեցնող այն առումով, որ առաջին անգամ Եւրոպայի առաջնութեան
խաղերն անցկացուելու են մեր հայրենիքում», յայտնեց Քարլ Պարտաքեանը:

Այո՛, առաջին անգամ ըլլալով Հայաստանի պասքէթպոլի պատմութեան մէջ, Եւրոպայի
առաջնութեան խաղերը տեղի պիտի ունենան մեր հայրենիքին մէջ: Հայաստանի
խումբը ընդգրկուած է Ը բաժանմունքին մէջ, ուր պիտի մրցին Ուելսի, Մալթայի,
Սկովտիոյ, Անտորայի եւ Սան Մարինոյի հաւաքականները: Հասնելու համար ցանկալի
արդիւնքներու: Գլխաւոր մարզիչը կը վստահեցնէ թէ դիտարկումներ կը կատարուին
ընտրելու լաւագոյն մարզիկները հայրենիքէն, Արցախէն եւ սփիւռքէն:

Ուշադրութեամբ հետեւեցանք մեր պասքէթպոլիստներու յաղթելու վճռակամութեամբ
լեցուն արտայտութիւններուն: Անոնք առանձնակի բժախնդրութեամբ ու
պատասխանատուութեամբ կը մօտենան ախոյեանական խաղերուն, որովհետեւ
հանդէս պիտի գան Հայաստանի դրօշի ներքոյ: «Ինձ համար մեծ պատիւ է, որ
ներկայացնելու եմ Հայաստանը: Իւրաքանչիւր հայ ցանկանում է օգտակար լինել իր
հայրենիքին: Ես յոյս ունեմ, որ մեր յաջողութեամբ կը կարողանանք բարձրացնել մեր
երկրի դրօշը», ըսաւ հաւաքականի անագ Մայք Դանիելեանը: Պասքէթպոլիստ Գոռ
Փլաւչեանը վստահ է թէ «Եւրոպայի առաջնութեան անցկացումը Հայաստանում
մեծապէս կարող է ազդել Հայաստանում այս մարզածեւի նկատմամբ
հետաքրքրութեան մեծացմանը եւ կ'ոգեւորի մեր կրտսեր պասքէթպոլիստներին»:

Հանդիպման ընթացքին Քարլ Պարտաքեան կարելորութեամբ նշեց որ բարերարներու
եւ Հայաստանի պասքէթպոլի դաշնութեան ջանքերուն շնորհիւ՝ դժուարութիւնները
այլեւս անցեալի մէջ են:

Խրախուսանքի եւ յաջողութիւններու համար խօսք առին ծանօթ բարերար եւ անցեալի

մարզիկ Ալպեր Պոյաճեանն ու Թոմիկ Ալեքսանեանը, որոնց ճառագայթող հպարտութիւնը յոյս ու հաւատք ներշնչեց մամլոյ ասուլիսի ներկաներուն սրտերուն մէջ:

Ահաւասիկ վաւերական եւ կարեւոր խորհուրդ պարունակող իրականութիւն մը, զոր Հայաստանի Գլխ. Հիւպատոս Գ. Յովհաննիսեան բանաձեւեց հետեւեալ խօսքով.
«Պասքեթպոլի տղամարդկանց Հայաստանի ազգային հաւաքականը Հայաստան-Սփիւռք համագործակցութեան լաւագոյն օրինակներից է»:

Մեր երիտասարդ խումբը քաջալերելու համար եկած էին նաեւ Հայաստանի նախկին հաւաքականի նշանաւոր խաղցողներէն եւ մարզիչներէն Աբրահամ Համամճեանն ու Թեթեւ քաշի ըմբշամարտի համաշխարհային աստղ Վանես Մարտիրոսեանը:

Նկար 1.- Ձախին՝ Քարլ, աջին՝ Չօրիկ

Նկար 2.- ՀՀ Հիւպատոսը հաւաքականի մէկ մասին հետ

